ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է ՝ 107.0%, 2018թ. հունվար-ապրիլին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109.5%, իսկ 2017թ. հունվար-ապրիլին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 573,649.4 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 51,534.3 և 88,155.2 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 68203.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3,443.6 և 15,344.4 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 886,751.6 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 99,180.4 և 200,878.7 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 575503.9 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 88,396.2 և 166,471.6 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 104.5%, 2018 և 2017թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.2%-ի և 112.9%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 108%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.8%-ի և 86.6%-ի պարագայում:

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվելու է եռամսյակային կտրվածքով

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

### Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







### Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 109.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.3%-ի և 112.1%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 117%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.6%-ի, 110.1%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 99,428.3 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 8,858.9 և 3,331.9 մլն. դրամով: Իսկ մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 380,175.4 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 62,631.1 և 99,733.7 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 85,867.8 մլն. դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 2,432.6 և 8,823.8 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հուվար-ապրիլին կազմել է 8,177.9 մլն.դրամ, ինչը 2018թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 194.6 և 577.2 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 97.6%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 91.7%-ի և 113.5%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 107.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.4%-ի և 117.2%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 100.2%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.47%-ի և 102.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 101.4%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.3%-ի և 103.9%-ի պարագայում:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

### Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




### Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




### Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 138.0%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.6%-ի և 108.4%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 106.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.1% և 105.5%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 118.8%, 2018 և 2017 թվականների, ինչպես նաև 2017 և 2016 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.8%-ի և 118.7%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվար-ապրիլին 2018թ. հունվար-ապրիլի նկատմամբ կազմել է 101.7%, 2018թ. հունվար-ապրիլին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 103.1%, 2017թ. հունվար-ապրիլին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.1%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2019թ. ապրիլի վերջի դրությամբ կազմել է 712,083.0 մլն դրամ, ինչը 169,307.0 մլն. դրամով կամ 131.2%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 168,010.0 մլն. դրամով կամ 130.9%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. ապրիլի դրությամբ կազմել է 83029 մարդ, ինչը 439 մարդով կամ 0.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12389 մարդով կամ 12.98%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. ապրիլի դրությամբ կազմել է 64801 մարդ, ինչը 3832 մարդով կամ 5.58%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 15412 մարդով կամ 19.55%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ (հազար ԱՄՆ դոլար)




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 2,181.4 մլն. դոլար, ինչը 96 մլն. դոլարով կամ 4.22%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 516.0 մլն. դոլարով կամ 30.98%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվար-ապրիլին կազմել է -748.8 մլն. դոլար, ինչը 38.5 մլն. դոլարով կամ 5.4%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 300.1 մլն. դոլարով կամ 66.89%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 716.3 մլն դոլար, ինչը 67.2 մլն. դոլարով կամ 8.58%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 107.9 մլն. դոլարով կամ 17.74%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 1,465.1 մլն դոլար, ինչը 28.7 մլն. դոլարով կամ 1.93%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 408.0 մլն. դոլարով կամ 38.6%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվար-ապրիլին կազմել է 177171 դրամ, ինչը 11027 դրամով կամ 6.64%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 9982 դրամով կամ 5.33%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2019թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 535,787.45 հազար դոլար, ինչը 52,093.27 հազար դոլարով կամ 10.77%-ով ավել է 2018թ. և 113,540.76 հազար դոլարով կամ 26.89%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար- ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկիր է փոխանցվել 396,935.45 հազար դոլար, ինչը 29,792.35 հազար դոլարով կամ 8.11%-ով ավել է 2018թ. և 127,151.52 հազար դոլարով կամ 47.13%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար-ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 138,852.0 հազար դոլար, ինչը 22,300.92 հազար դոլարով կամ 19.13%-ով ավել է 2018թ. և 13,610.76 հազար դոլարով կամ 9.8%-ով պակաս է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-ապրիլ)

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ (մլն ՀՀ դրամ)




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ




2019թ. հունվար- ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 260,647.19 մլն. դրամ, ինչը 27,902.76 մլն. դրամով կամ 11.99%-ով ավել է 2018թ. և 55,621.22 մլն. դրամով կամ 27.13%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար- ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկիր է փոխանցվել 193,061.6 մլն. դրամ, ինչը 16,358.56 մլն. դրամով կամ 9.26%-ով ավել է 2018թ. և 62,050.42 մլն. դրամով կամ 47.36%-ով ավել է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից: 2019թ. հունվար- ապրիլին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 67,585.59 մլն. դրամ, ինչը 11,544.2 մլն. դրամով կամ 20.6%-ով ավել է 2018թ. և 6,429.2 մլն. դրամով կամ 9.51%-ով պակաս է 2017թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից:

2019թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 78 597.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -42 804.9 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -35 732.9 մլն. դրա մ: 2018թ. ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 8 968.8 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 12387.7 և -21356.5 մլն դրամ: 2017թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -11 428.0 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 32 281.1 և - 20 853.1 մլն. դրամ:

* Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքերի հրապարակումները, համապատասխանաբար՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի և ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ